Ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրում

Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականներին փուլային եղանակով ներդրվում է Ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը:

Ովքե՞ր պետք է 2023 թվականի հաշվետու տարվա համար ներկայացնեն եկամուտների հայտարարագիր.

2023 թվականի հաշվետու տարվա համար **մինչև 2024 թվականի մայիսի 1-ը ներառյալ**, եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագրեր հարկային մարմին պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության հետևյալ քաղաքացիները (բացառությամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող անձանց)՝



Ի՞նչ է անհրաժեշտ եկամտային հարկի տարեկան հայտարարագիր ներկայացնելու համար.

Քաղաքացիները եկամտային հարկի տարեկան հայտարարագիր պետք է ներկայացնեն մուտք գործելով ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) պաշտոնական կայք, ընտրելով «Ֆիզիկական անձ» բաժինը, այնուհետև ընտրելով «Ֆիզիկական անձի տարեկան հայտարարագիր» ենթաբաժինը: Ենթաբաժնում առկա կամ հետևյալ հղմամբ՝ https://self-portal.taxservice.am/sign-in/ մուտք գործել «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» և ներկացանել հայտարարագիր :

Եկամտային հարկի տարեկան հայտարարարագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է՝

Քայլ 1 . Հաշվառվել Հայաստանի Հանրապետության Պետական Եկամուտների Կոմիտեում և ստանալ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)

ՀՀ ՊԵԿ-ում հաշվառվելու և ՀՎՀՀ ստանալու համար գործում է 3 տարբերակ.

Տարբերակ 1. Առաջին տարբերակով հաշվառման կանգնելու և ՀՎՀՀ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել առցանց դիմում հետևյալ հղմամբ՝ https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf ՝ սեղմելով «Ներկայացնել դիմում» կոճակը:

Տարբերակ 2. Անձնագրով և սոցիալական քարտով այցելել հարկային տեսչություն:

Տարբերակ 3. Պարզեցված կարգով հաշվառվել **«Ես եմ»** ազգային նույնականացման հարթակում



Քայլ 2. Ունենալ խիստ էլեկտրոնային նույնականացում

Համակարգից օգտվելու և հայտարարագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ խիստ էլեկտրոնային նույնականացում, իսկ փոփոխություններ անելու և հաստատելու համար՝ **նաև էլեկտրոնային ստորագրություն:**

Այն անհրաժեշտ է Ձեր եկամուտների վերաբերյալ տվյալների գաղտնիությունը, անվտանգությունը և դրանց հասանելիությունը բացառապես Ձեզ համար ապահովելու նպատակով: Այժմ գործում է խիստ էլեկտրոնային նույնականացում անցնելու և էլեկտրոնային ստորագրություն ստանալու երկու տարբերակ:



Տարբերակ 1. Բջջային հեռախոսի միջոցով խիստ էլեկտրոնային նույնականացում և էլեկտրոնային ստորագրություն, ինչի համար անհրաժեշտ է՝

1. **Ունենալ նույնականացման քարտ**
   Նույնականացման քարտ (ID Card) չունենալու դեպքում՝ ձեռք բերել այն ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային ցանկացած գրասենյակից:
2. **Այցելել բջջային սպասարկման կենտրոն և ստանալ նոր քարտ**
   Նույնականացման քարտով և բջջային հեռախոսով այցելել Ձեր կամ նախընտրելի այլ բջջային կապի օպերատորի ցանկացած սպասարկման կենտրոն, որտեղ բջջային հեռախոսահամարի քարտը (SIM) կփոխարինվի նոր քարտով, իսկ օպերատորին փոխելու դեպքում՝ կտրամադրվի նոր քարտ:
3. **Ակտիվացնել էլեկտրոնային նույնականացումը**
   Բջջային կապի օպերատորի սպասարկող անձնակազմի օգնությամբ և Ձեր մասնակցությամբ ակտիվացնել էլեկտրոնային նույնականացումը:
4. **Ակտիվացնել էլեկտրոնային ստորագրություն**
   Ակտիվացնել էլեկտրոնային ստորագրության ծառայությունը՝ կապի օպերատորի սպասարկման կենտրոնում, ինչպես նաև ինքնուրույն՝ վճարային տերմինալների միջոցով կամ այցելելով՝ https://www.ekeng.am/hy/payments:

Տարբերակ 2. Նույնականացման քարտի միջոցով էլեկտրոնային նույնականացում և էլեկտրոնային ստորագրություն, ինչի համար անհրաժեշտ է՝

1. **Ունենալ նույնականացման քարտ**
   Ունենալ մինչև **2023 թվականի փետրվարի 15-ը** Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային գրասենյակից ստացած էլեկտրոնային չիպ պարունակող վավեր նույնականացման քարտ, որի հետ առանձին ծրարով տրամադրվել են PIN և PUK ծածկագրեր:
2. **Ունենալ ընթերցող սարք**
   Ունենալ ընթերցող սարք, որը կարող եք նաև ձեռք բերել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից (մանրամասները՝ https://www.ekeng.am/hy/reader):
3. **Ստանալ նոր SIM քարտ**
   Այցելել www.ekeng.am կայք և հետևելով ուղեցույցներին՝ ակտիվացնել էլեկտրոնային քարտը և ստանալ էլեկտրոնային ստորագրություն:

Հարկային տեսչությունից ստացված **հարկ վճարողի հաշվառման համարով**, **օգտվողի անունով** և **գաղտնաբառով** անհրաժեշտ է մուտք գործել https://self-portal.taxservice.am/sign-in/ «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ի «Հայտարարագրման» բաժին և իրականացնել եկամուտների հայտարարագրում:

Հայտարարագրի լրացման մանրամասներին կարող եք ծանոթանալ կից տեսանյութում:

Ի գիտություն

Նշված տարբերակներից որևէ մեկով արդեն իսկ գործող կամ ակտիվ էլեկտրոնային նույնականացման և էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում լրացուցիչ որևէ գործողություն չի պահանջվում:

Կարևոր է իմանալ՝

- 2025 թվականից սկսած հայտարարագրեր պետք է ներկայացնեն ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ **բոլոր քաղաքացիները:**
- 2024 թվականի հունվարի 1-ից ի վեր **բաժնետոմսերի վաճառքը չի** ազատում 2023 թվականի համար հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից:
- 2023 թվականի համար հայտարարագրերը հարկային մարմին պետք է ներկայացվեն **մինչև 2024 թվականի մայիսի 1-ը ներառյալ:**

Եկամտային հարկի տարեկան հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձը եկամտային հարկի գումարից կարող է ստանալ **սոցիալական ծախսի փոխհատուցում**՝ ինչպես իր, այնպես էլ ընտանիքի անդամների համար կատարած սոցիալական ծախսերից: Սոցիալական ծախս է համարվում ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններից **առողջության ապահովագրական փաթեթի ձեռքբերումը** և ՀՀ-ում իրականացվող **կրթական հաստատություններին կատարված ուսման վճարները**:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր չներկայացնելու հետևանքները

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի Հոդված 169՝1-ի եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը-հայտարարագիրը հարկային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է

Ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման վերաբերյալ տեղեկատվական տեսանյութը կարող եք դիտել հետևյալ հղմամբ:

Աղբյուրը՝ www.src.am